[illegible]

891.99
П-59

-6 NOV 2011

„ԱՇԽԱՏԱՆՔ"-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ № 8.




БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՍՐԱՆՔ




891.99
Ո-59

ԳԻՆԸ 2 ԿՈՊԵԿ

№1230
-6 NOV 2011

„ԱՇԽԱՏԱՆՔ"-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ № 8.




БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ՈՎՔԵՐ ԵՆ ՍՐԱՆՔ




891.99
Ո-59

ԳԻՆԸ 2 ԿՈՊԵԿ

48634

59

Изд. СПС Армении

# КТО ТАКИЕ?

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 395ր
ՏԻՐԱԺ 500

ՀԶ332

# ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՐԵՑԻՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Ցերեկվա ժամը 11-ն է. իրար հետ զրուցելով Հայպետգլխառևտրարդյունտրեստ մտան տրեստի նախագահն ու տեղկոմի նախագահը։

— Ընկ. Վալենց, զեկուցումը գրե՞լ եք. հարցրեց տեղկոմի նախագահը՝ տրեստի նախագահին։

— Չե սիրելիս. այսօր անպայման պիտի գրեմ։

Հաշվետու զեկուցում գրելու վճռականությամբ, յերկու նախագահները մտան իրենց առանձնասենյակները։

Յերկուսն էլ միաժամանակ զանգահարեցին՝ կանչեցին ցրիչներին՝ հրաման տվին՝ բոլորին հայտնել «խիստ զբաղված են»։

Առանձնասենյակների դռները զրնգացին ու փակվեցին։ Ահա թե՛ ինչ կատարվեց յերկու առանձնասենյակներում։

Հայպետգլխառևտրարդյունտրեստի նախագահ Վալենցը նստեց բազկաթոռին, ժամացույցը դրեց գրասեղանի վրա, թուղթ հանեց, ծխախոտը կպցրեց, հազաց ու գրեց.

16.07.2013



## «ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ

Խ. Գուդենի

Հ. Տեալ

## I. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Տրեստը ունի մի նախագահ. սա՝ 3 օգնա-
«կաններ, 6 փոխարինողներ։
«Շտատը քիչ է, պետք ավելացնել ևս 20
«մարդով, 15 ապեցներով։
«Կապը բոլորի հետ կենդանի յև և սերտ։

## II. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

«Գործարաններում աշխատանքն և յեռում։
«Արտադրողականությունը, մեր պաշ-
«տոնավարության ընթացքում հա-
«սել է նախապատերազմյանի 199%-ին, վոչ մի
«կոնֆլիկտ, վոչ մի անհամաձայնություն։
«Միությունն ամեն ինչ անում է։ Տրեստի
«արտադրողականությունը շուտով սրընթաց կեր-
«պով կանցնի 1913 թվից, վերելքի շրջան ենք
«ապրում։

Ստորագրեց, ծրարի մեջ դրեց զեկուցումը, ղըռն-
դացրեց։
Ընդքաժգլխվարփոխը ներս մտավ։
«Անմիջապես տպագրել ավեք 17 որինակ հատուկ
մարդու միջոցով՝ ու դրեք բոլորին. շուտ, շտապեք,
կարևոր է։

ԳՈՍ ԲԻԲԼԻՈՏԵԿԱ
ՀՍՍՌ-Арм ССР
И. ИМ. А. Мясникяна
36242-66



Տեսնենք ինչ կատարվեց մյուս առանձնասեն-
յակում։

* * *

Տեղկոմի նախագահը նույնպես թուղթ հանեց,
ծխատոտը կպցրեց, հազաց ու գրեց.
«Կապը մասսաների հետ սերտ է, կենդանի։
«Շտատներն ու ապեցները քիչ են, պետք
«ավելացնել։
«Իմ ընտրությունից հետո գործարանների
«և տրեստի արտադրողականությունը հասել է
«նախապատերազմյանի 199%-ին։ Վոչ մի ան-
«բավականություն, վոչ մի կոնֆլիկտ։
«Բանակումբում կյանք է յեռում։ Յերեկ,
«հազարավոր խուռն բազմության առաջ յես զե-
«կուցեցի՝ Միասնական արհշարժման կատարած
«գործնական աշխատանքների մասին, ընկ. Վա-
«լենցը զեկուցեց «Համաշխարհային Եկոնոմիկա-
«յի ու միջազգային դրության մասին»։
Զեկուցումները տևեցին $7^3/_4$ ժամ։
Ստորագրեց, գրչակոթը շպրտեց, զեկուցումը
ծրարեց, կնքեց ու կանչեց ցրիչին. «շտապ, անմիջա-
պես՝ Միություն...

* * *

Անցավ յերեք ամիս։
Վրա հասավ հաշվետու զեկուցման ժամը։
Տրեստի ու տեղկոմի նախագահները նորից զե-
կուցում գրեցին.
«Կապը մասսաների հետ սերտ է, կենդանի։
«Իմ ընտրությունից հետո գործարանների

«և տրեստի արտադրողականությունը հասել է «նախապատերազմյանի 199%-ին։

«Ոչ մի կոնֆլիկտ, անհամաձայնություն։

«Աշխատանքը յեռում է. ժողովներ... բանաձևեր...»

Զեկուցումները նորից շտապ կարգով ուղարկվեցին իրենց տեղերը։

* * *

Անցավ մի յերեք ամիս ևս։

Մոտեցավ զեկուցումներ գրելու ժամանակը։

Բայց այս անգամ Հայպետգլխաուետրարդյունանտրեստի ղեկավարներից և ոչ մեկը բախտ չունեցավ զեկուցում գրելու, վորովհետև սապոնի գործարաններն ու տրեստը փակվել եյին, ամեն բան վերջացել եր...

— Ի՞նչ եք կարծում, ինչու համար։

— Անարտադրողականության ու քայքայման շնորհիվ։

# ԶԳԶԳՎԱԾ ԺՈՂՈՎ

Անցյալ որը մեր գործարանի կոլլեկտիվի ընդհանուր ժողովն եր։ Սովորականին հակառակ այդ որը շատերն եյին յեկել, վորովհետև գործարկոմը ամեն տեսակ միջոցներ ձեռք եր առել—հայտարարել եր, վոր կենտրոնից հատուկ հրավիրված մարդ ե յեկել և զեկուցելու յե շատ կարևոր խնդրի մասին։

Կենտրոնից յեկած ընկերն իսկապես վոր զեկուցեց շատ լուրջ տոնով. յերևում եր, վոր մարդը պատրաստվել եր զեկուցման համար։ Նա խոսեց ամբողջ յերկու ժամ, իսկ ժողովականները ճշտությամբ կատարեցին իրենց պարտականությունը—հանգիստ նստած լսեցին մինչև վերջը։

Յերբ զեկուցումը վերջացավ, նախագահը դիմեց ժողովականներին, թե հարցեր չկա՞ն զեկուցման առթիվ։

Բոլորը լուռ եյին. և ի՞նչ հարցնեյին։

Առաջարկներ յեղան «ընդունել ի գիտություն», բայց հանկարծ Յեգորը վերջին նստարաններից վեր թռավ ու գոռաց։

— Յես մի հարց ունեմ.

Բոլորը յետ նայեցին. դժգոհությամբ նայեցին նրան, վոր իր սովորության համաձայն ուզում եր այս խաղաղ ժողովն ել «խանգարել» և... ձգձգել։

Բայց Յեգորը ձայն ստացավ նախագահից ու խոսեց։

— Ընկեր զեկուցողը լավ խոսեց, բայց խոսեց լուս-աշխատավորների մասին, նրանց տարիֆների, կուլտ- կարիքների, սանիտարական ոգնության, աշխատանքային առանձնահատկությունների և այլնի մասին։ Բան չունեմ ասելու, լավ խոսեց, այդ բոլոր

հարցերը լավ պարզեց, բայց արդյոք գիտե՞ ընկ
վոր մենք լուս-աշխատավորներ չենք, այլ լռանպա
ներ՞ ենք:

Բոլորը լռեցին ու նայեցին նախագահին:

Հարցը անսպասելի յեր, բայց սուր և տեղին
ամեն մեկը զարմանում եր, թե ինչպես ինքը չ
ծեց այդ մասին:

Նախագահն ու զեկուցողը փսփսացին, ապ
կուցողը վեր կացավ.

— Ընկերներ, ընկ. Յեգորի ասածը ճիշտ ե
զեկուցեցի լուս-աշխատավորների մասին, և գի
վոր դուք լռանպործներ եք. բայց յես այդ մ
առաջուց հայտնել եյի ձեր գործարկոմի նախագ
Յերբ նա խնդրեց ինձ զեկուցել, յես հայտնեցի
լուս-աշխատավորների համար կարող եմ զեկո
տալ: Բայց նա ասաց, վոր միևնույն ե, ինչի
ել զեկուցեմ, կարցնի, վորովհետև կենտրոնից
կել: Յեվ յես ել զեկուցեցի, վորովհետև ինձ հա
միևնույն ե, թե ով ե ինձ լսողը:

Խնդիրը պարզ եր:

Յեգորն ուզեց նախագահին մեղադրել,
զանգը լռեցրեց նրան, վորովհետև վոչ վոք չեր
ժողովը ձգձգել: Առանց այն ել յերկու ժամից
նստել եյին և լուս-աշխատավորների հարցերը
Վորոշեցին շնորհակալություն հայտնել զեկուցո
ցրվեցին:

Այսպես ե մեր Յեգորը: Ամեն տեղ ու մ
«մանր մունր» բաներ ե գտնում խոսելու և ժողով
«ձգձգելու»: Տեղովը «շատ ե» մեր Յեգորը:

Թարգմանություն "Крокоди

48634